ՏԵՂԵԿԱՆՔ

Ինտերնետ շահումով խաղերի ոլորտի, կազմակերպիչների կողմից օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված մշտադիտարկման վերաբերյալ

1. Ոլորտի ծավալների վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակության ստվար զանգված սկսել է օգտվել ինտերնետ շահումով խաղերից, և սոցիալական խնդիրները վերոգրյալի արդյունքում խորանում են՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացվել է մշտադիտարկում ոլորտի ծավալների աճի պատճառների բացահայտման ուղղությամբ:

ՀՀ-ում ինտերնետ շահումով խաղերի կազամերպիչներ են՝ «Վիվարո գրուպ» ՍՊԸ-ն (vivarobet.am, ներկայումս՝ «Սոֆտ կոնստրակտ» ՍՊԸ), «Դիջիթեյն» ՍՊԸ-ն (totogaming.am), «Կաբարկո» ՍՊԸ-ն (adjarabet.am), «Գուդ սոֆտ» ՍՊԸ-ն (Goodwin.am): ՀՀ պետական եկամուտների կոմիտեից պահանջվել են (Կցվում է՝ Փ-1) «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող ֆինանսական հոսքերի հաշվետվությունները 2018-2020թթ. ժամանակահատվածի համար: Տրամադրված տեղեկատվության (Կցվում է՝ Փ-2, Հավելված 1) համաձայն՝

1. Կազմակերպիչների քանակը 2018-2019թթ. եղել է 3, իսկ 2020թ.-ին՝ 4,
2. 2018թ. խաղացողների կողմից գնվել է 333.0 մլրդ. դրամի միավոր, 2019թ.՝ 1,115.0 մլրդ. դրամի միավոր, 2020թ. 10 ամիսների ընթացքում՝ 1,548.0 մլրդ. դրամի միավոր,
3. 2018թ. միջին ամսական գնված միավորների ծավալը կազմել է 28.0 մլրդ դրամ, 2019թ.՝ 93.0 մլրդ. դրամ, 2020թ. 155.0 մլրդ. դրամի:
4. Միջին ամսական խաղացողների թիվը 2018թ. կազմել է 18093, 2019թ.-ին՝ 29911, 2020թ.-ին՝ 44082:

Այսինքն՝ 2020թ.-ին 2018թ. համեմատությամբ կազմակերպիչների կողմից գեներացված միջոցները առնվազն հնգապատկվել են՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 32%-ը, իսկ մասնակիցների քանակն առնվազն կրկնապատկվել: Համախառն ներքին արդյունքի նման զանգվածի գեներացումը չորս տնտեսվարողների մոտ կրում է բարձր ռիսկեր ֆինանսական միջոցների արտահոսքի և փողերի լվացման հավանական առկայության տեսանկյունից: 2020թ. -ի տասը ամսվա ցուցանիշը գերազանցում է միևնույն ժամանակահատվածի ՀՀ պետական բյուջեի եկամուտներին:

Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ եկամուտների նման շեշտակի աճի պատճառ հանդիսացող հանգամանքներից է այն, որ 2020թ.-ից թույլատրվել է ինտերնետ շահումով խաղերի գովազդը, որը մինչ այդ արգելված էր: Մասնավորապես, «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2019թ. հունիսի 19-ի ՀՕ-91-Ն օրենքով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասը փոփոխվել է՝

«15.Արգելվում է շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ դրանց կազմակերպիչների գովազդը, բացառությամբ խաղատների կամ շահումով խաղերի շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների:» ձևակերպումը դարձել է՝

*«15.Արգելվում է շահումով խաղի **(բացառությամբ ինտերնետ շահումով խաղի)** կամ խաղատան կամ խաղասրահի կամ դրանց կազմակերպիչների ցանկացած տեսակի գովազդը, այդ թվում՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով, բացառությամբ իր պաշտոնական կայքի կամ խաղատների կամ շահումով խաղերի շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների, իսկ խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի գովազդը թույլատրվում է նաև խաղարկությունով կամ*

համակցված վիճակախաղի վաճառակետերում: ***Ինտերնետ շահումով խաղերի գովազդի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով վիճակախաղի գովազդի համար սահմանված պահանջներն ու սահմանափակումները:»***

Օրենսդրական փոփոխության արդյունքում լայն տարածում են ստացել ինտերնետ շահումով խաղերի գովազդը: Հասարակական տրանսպորտում, փողոցներում, հեռուստատեսությամբ և ռադիոյով ընդհանուր գովազդվող առարկաների գերակշիռ մաս են կազմում vivarobet.am, adjarabet.am, totogaming.am կայքերով ինտերնետ շահումով խաղերի գովազդը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացվել է որոշ հեռուստահաղորդակցության ալիքների ընդհանուր գովազդի և դրանց մեջ ինտերնետ շահումով խաղերի մասնաբաժնի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ ժամը 22:00-ից 07:00 ժամանակահատվածում գովազդի տևողությունը եղել է 209 րոպե, որից 69 րոպեն կամ 33%-ը ինտերնետ շահումով խաղի գովազդ է:

ՀՀ ֆինանսների նախարարի (լիազոր մարմին) կողմից ներկայացվել են պարզաբանումներ՝

1. Ինտերնետ շահումով խաղերի գովազդի արգելքի հանման արդյունքում հանրային օգուտների առկայության,
2. Խաղատների, խաղասրահների և ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների նկատմամբ ցուցաբերված խտրական պետական քաղաքականության վերաբերյալ:

Վերջինիս կողմից ներկայացված կարծիքով հաստատվել է, որ ինտերնետ շահումով խաղերի, խաղատների և խաղասրահների նկատմամբ պետք է վարվի միասնական պետական քաղաքականություն: Հարկ է նշել, որ վերոգրյալը բխում է նաև «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ 2016թ. սեպտեմբերի 28-ի ՀՕ-149-Ն օրենքի տեղեկանք հիմնավորումից (http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8265&Reading= 0):

Առաջարկություն ՀՀ վարչապետին՝

Հաշվի առնելով ինտերնետ շահումով խաղերի ծավալների աճի արդյունքում հանրային օգուտի բացակայությունը և հանրային վնասի առկայությունը, ինչպես նաև խաղատների և խաղասրահների նկատմամբ վարվող խտրական պետական քաղաքականության բացառման անհրաժեշտությունը՝ հանձնարարել աշխատակազմին ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ: Մասնավորապես՝ «15-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված «(բացառությամբ ինտերնետ շահումով խաղի)» բառերը փոխարինել «(ներառյալ ինտերնետ շահումով խաղի)» բառերով և հանել «Ինտերնետ շահումով խաղերի գովազդի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով վիճակախաղի գովազդի համար սահմանված պահանջներն ու սահմանափակումները:» նախադասությունը: